ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N2577 - Ա **14 ապրիլի 2009թ.**

ՄԵԾԱՐԵՆՑԻ ՓՈՂՈՑԻ Հ. 2 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՌԻՓՍԻՄԵ ՄԻՔԱՅԵԼԻ ԴԱՐԲԻՆՅԱՆԻ, ԱՆՅԱ ԿԻՄԻԿԻ ՈՒՍՆՅԱՆԻ, ՆԱԻՐԱ ԿԻՄԻԿԻ ՈՒՍՆՅԱՆԻ, ՍԱՐԳԻՍ ԿԻՄԻԿԻ ՈՒՍՆՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Հռիփսիմե Միքայելի Դարբինյանի (ծնված 01.05.1954թ.), Անյա Կիմիկի Ուսնյանի (ծնված 15.04.1980թ.), Նաիրա Կիմիկի Ուսնյանի (ծնված 25.07.1982թ.), Սարգիս Կիմիկի Ուսնյանի (ծնված 22.11.1977թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Մեծարենցի փողոցի հ.2 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 267.86քմ, որից 224.52քմ մակերեսով հողամասը Հռիփսիմե Միքայելի Դարբինյանին, Անյա Կիմիկի Ուսնյանին, Նաիրա Կիմիկի Ուսնյանին, Սարգիս Կիմիկի Ուսնյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է (250քմ մակերեսով հողամասից օգտագործվում է 224.52քմ մակերեսով հողամասը): Օրինական հողամասին կից օգտագործվող 43.34քմ մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, 16.09.2008թ. ժառանգության իրավունքի վկայագիրը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանման 23.09.2008թ. հ.207, Երևանի քաղաքապետարանի <<Հողի և ունեցվածքի գործառնություններ>> ՊՓԲԸ-ի 06.04.2009թ. հ.20/2-Ե-175 գրությունները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 23.03.2009թ. հ.20-Ել-2095 եզրակացությունը, համաձայն որի Մեծարենցի փողոցի հ.2 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով <<Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Մեծարենցի փողոցի հ.2 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Հռիփսիմե Միքայելի Դարբինյանի, Անյա Կիմիկի Ուսնյանի, Նաիրա Կիմիկի Ուսնյանի, Սարգիս Կիմիկի Ուսնյանի հողօգտագործման իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 224.52քմ մակերեսով հողամասին կից 43.34քմ

մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 43.34քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ։

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանման կողմից։

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով։

4. Մեծարենցի փողոցի հ.2 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ <<Մեծարենցի փողոցի հ.2 տուն>>։

5. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Հռիփսիմե Միքայելի Դարբինյանի, Անյա Կիմիկի Ուսնյանի, Նաիրա Կիմիկի Ուսնյանի, Սարգիս Կիմիկի Ուսնյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները։

6. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Մալաթիա-Սեբաստիա թաղապետարան։

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա։

8. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ**